# ԿԱՐԾԻՔ

## ՄԻՇԱ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԺԳ.00.01 - «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանցագործություն կատարելու համար ազատազրկված և քրակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման հիմնախնդիրը տարբեր ժամանակաշրջաններում եղել է մասնագետների, այդ թվում նաև մանկավարժների ուսումնասիրության առարկա: Սակայն վերոնշյալ հիմնախնդրին վերաբերող գիտահետազոտական աշխատանքները քիչ են: Նորանկախ ՀՀ-ի և հայ հասարակության պայմաններում ևս ազատազրկված անձանց կրթության իրավունքի իրացման հիմնախնդրին վերաբերող համակարգված հետազոտություններ, հրատարակված աշխատանքներ գրեթե չկան:

Հանցագործություն կատարած և ազատազրկման դատապարտված անձանց վերասոցիալականացման հիմնախնդրի լուծումը կարևորվում է ՀՀ-ի արդարադատության համակարգում իրականացվող պետական քաղաքականության ոլորտում բարեփոխումների ռազմավարության համատեքստում: Ազատազրկված անձանց վերասոցիալականացման կարևոր միջոց է կրթությունը: Կրթության միջոցով հնարավոր է վերափոխել անձի հանցածին դիրքորոշումները, ձևավորել սոցիալականացման տեսանկյունից ցանկալի արժեքներ, նպատակներ, վերափոխման և ուղղման մոտիվացիա, իրավագիտակցություն, հավատ ապագայի նկատմամբ: Խոսքը գնում է ինչպես կրթության ֆորմալ համակարգի, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության մասին:

Քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման համակարգի ձևավորումն անմիջականորեն կնպաստի պատիժ կրող անձանց վերասոցիալականացման, ուղղման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, իսկ որպես հեռահար նպատակ՝ կհանգեցնի հասարակության

իրավագիտակցության բարձրացմանը, հանցավոր դիրքորոշումների, իրավախախտումների, կրկնահանցագործությունների կանխարգելմանը:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումներն անպայմանորեն ենթադրում են գիտական հետազոտություններ, գիտագործնական հիմնավորումներ, առաջարկներ, որով էլ արժևորվում է Միշա Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ձևակերպված է հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք կազմում են տրամաբանական ամբողջություն, բխում են մեկը մյուսից: Այս առումով Մ. Թադևոսյանի ատենախոսության ներածությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակն անդրադարձել է քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացման հիմնախնդրին, գործընթացի կազմակերպման իրավական հիմքերին:

Ատենախոսության երկրորդ գլխում Մ.Թադևոսյանը ներկայացրել է քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման միջազգային փորձը, գործող մոդելները մասնավորապես՝ սկանդինավյան, հետխորհրդային մի քանի երկրներում և վերլուծել է կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ-ի քրեակատարողական հիմնարկներում:

Աշխատանքի երրորդ գլխում Մ.Թադևոսյանը ներկայացրել է ՀՀ-ի քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման համակարգի իր տեսլականը: Հեղինակը ներկայացրել է նաև ՀՀ-ի քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման վիճակին վերաբերող իր ուսումնասիրության արդյունքները:

Ողջունելի է, որ ասպիրանտը ոչ միայն ուսումնասիրել ու վերլուծել է կրթության կազմակերպման պրակտիկան, առկա խնդիրները ՀՀ-ի քրեակատարողական հիմնարկներում, այլև մշակել է ՀՀ-ի քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման համակարգ առանձին բաղադրիչներով՝ քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման մոդել, կրթության կառավարման հիմնական սուբյեկտների գործառույթներ, կրթության բովանդակության մեթոդաբանական հիմքերն արտացոլող մոդել և դրա իրականացման մանկավարժական պայմաններ, դասավանդողների կոմպետենցիաներ, պատիժ կրող անձանց կոմպետենցիաների արժեքավերաբերմունքային բաղադրիչ, կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման չափանիշներ:

Ատենախոսության եզրակացությունները համապատասխանում են առաջադրված խնդիրներին և պաշտպանության ներկայացված դրույթներին:

Մ.Թադևոսյանն օգտագործել է ժամանակակից գրականություն, ոլորտը կարգավորող օրենքներ, նորմատիվ-իրավական ակտեր, այլ փաստաթղթեր:

Թվարկված դրական կողմերին զուգահեռ աշխատանքի վերաբերյալ ունենք մի քանի դիտարկումներ.

1. Էջ 119-ում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման ակնկալվող վերջնարդյունք սահմանվել է «անձի՝ հասարակության ներկա համակարգին արդյունավետ ինտեգրման կարողությունների ձևավորումը և զարգացումը», ինչը, մեր կարծիքով, գործառույթ է կամ խնդիր: Վերջնարդյունք կարող էր լինել արդեն ձևավորված կարողությունը:
2. Եզրակացությունները բովանդակային առումով համապատասխանում են հետազոտության նպատակին, խնդիրներին, սակայն ձևակերպման առումով ընդհանրական են (թիվ 1, 2), բավականին երկար, կազմված մի քանի նախադասություններից՝ մասնավորապես թիվ 1, 3, 4, 6, 7:
3. Էջ 129-130-ում հեղինակը ներկայացրել է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման արդյունավետության գնահատման իր կողմից մշակված չափանիշները: Մեր կարծիքով, անհրաժեշտ է հետագայում հստակեցնել չափելիության տեսանկյունից,

որպեսզի նվազագույնի հասցնել դրանցով իրականացվող գնահատման գործընթացում սուբյեկտիվության գործոնը:

4. Կարծում եմ, որ աշխատանքը կշահեր, եթե դատապարտված և կալանք կրող անձանց կրթության կազմակերպման համակարգում վերասոցիալականացման առանձին միջոց դիտարկվեր նաև մասնագիտական կողմնորոշումն ու կարիերայի պլանավորումը: Իհարկե, աշխատանքում մասնագիտական կողմնորոշման, զբաղվածության ապահովման մասնավոր հարցերի վերաբերյալ անդրադարձ կա, սակայն խոսքը առանձին բաղադրիչի մասին է:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն, գիտական նորույթ, տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող, ավարտուն գիտական հետազոտություն է, որը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ հայցողը միանգամայն արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ԸՆԴԻՄԱԽՈՍ՝ Հ.Վ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Հ.Թադևոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար՝ Մ.ԻՍՊԻՐՅԱՆ

21.10.2021թ.